Extractive Industries Transparency Initiative

ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարություն 26 Փետրվար 2021

Հայաստան. 2.5 պահանջի վավերացում

ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության գնահատականի նախագիծ

EITI International Secretariat
Phone: +47 222 00 800 • E-mail: secretariat@eiti.org • Twitter: @EITIorg • www.eiti.org
Address: Rådhusgata 26, 0151 Oslo, Norway

Հայաստան. 2.5 պահանջի վավերացում ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության գնահատականի նախագիծ

Բովանդակություն

1. Համառոտագիր 2
2. Ընդհանուր տեղեկություններ 3
3. Իրական սեփականությանը վերաբերող 2.5 պահանջի գնահատում 3
Հավելված «Ա». տեխնիկական գնահատական 9
Հավելված 2. Հայաստանում իրական սեփականատերերի բացահայտումներին վերաբերող հոդվածներ 27

1. Համառոտագիր

Քարտուղարության նախնական գնահատականն այն է, որ Հայաստանը «զգալի առաջընթաց» է գրանցել իրական սեփականությանը վերաբերող՝ 2.5 պահանջի կատարման նախնական չափանիշները բավարարելու ուղղությամբ. այս գնահատականը սահմանափակված է ոչ էական համարվող իրավական սեփականատերերի վերաբերյալ տեղեկատվական բացերով՝ պահանջի հասցեագրման ուղղությամբ գրանցված ընդհանուր առաջընթացի համատեքստում:

Հայաստանը սահմանել է իրական սեփականության (ԻՍ) բացահայտման իրավական շրջանակ և մշակում է առցանց ռեգիստր, որը զգալիորեն կբարելավի իրական սեփականատերերի տվյալների օգտագործելիությունը: Բոլոր արդյունահանող ընկերություններից հարցվել է իրական սեփականության մասին տվյալներ, և առաջին բացահայտումները հրապարակվել են առցանց եղանակով՝ PDF ձևաչափով: ԲՇԽ-ն ակտիվորեն մասնակցել է ԻՍ թափանցիկության շրջանակի մշակման գործընթացին և ուսումնասիրել է մինչ այժմ կատարված բացահայտումները: Իրական սեփականության վերաբերյալ տեղեկությունների ճշգրտությունն ու մատչելիությունն ապահովելու նպատակով Հայաստանը հիմնվում է միջազգային լավագույն փորձի վրա:

Այդուհանդերձ, իրավական խոչընդոտները կառավարությանը թույլ չեն տվել բացահայտել փակ բաժնետիրական ընկերությունների (ՓԲԸ-ներ) իրավական սեփականատերերին: Ընկերությունները այս տեղեկությունները չեն տրամադրել Հայաստանի ԱՃԹՆ գործընթացի պահանջով: Միևնույն ժամանակ, ՓԲԸ-ների իրական սեփականատերերի մասին տեղեկությունները հրապարակային են: Ըստ 2018 թ. ԱՃԹՆ զեկույցի՝ Հայաստանում օգտակար

հանածոների արդյունահանման թույլտվություն ունեցող 26 ընկերություններից 10-ը ՓԲԸ-ներ են:

2. Ընդհանուր տեղեկություններ

ԱՃԹՆ-ի հայաստանյան գործընթացի առաջին վավերացումից հետո 2020 թ. հուլիսի 9-ին ԱՃԹՆ-ի քարտուղարությունը եզրակացրեց, որ Հայաստանը «զգալի առաջընթաց» է գրանցել ԱՃԹՆ-ի 2016 թ. ստանդարտի իրականացման ուղղությամբ (տե՛ս Խորհրդի որոշումը):

2019 թ. հունիսին ԱՃԹՆ-ի խորհուրդը հավանություն տվեց իրական սեփականության 2.5 պահանջի գնահատման շրջանակին:[1] Որպեսզի հնարավոր լինի բոլոր երկրներում ապահովել 2.5 պահանջի մասով առաջընթացի՝ ողջամիտ ժամկետներում գնահատումը, Խորհուրդը համաձայնեց, որ 2019 թվականին սկսված կամ եզրափակված վավերացման գործընթացում ընդհանուր առմամբ «զգալի առաջընթացի» հասած ցանկացած երկիր պետք է 2021 թ. հունվարի 1-ին ենթարկվի իրական սեփականության մասով վավերացման: Խորհուրդն այս որոշումը հաստատեց Վավերացման նոր մոդելի անցման շուրջ համաձայնության գալու ընթացքում:[2]

Այս գնահատումը կատարվել է իրական սեփականատերերի բացահայտման գնահատման առաջին փուլի համար Խորհրդի հաստատած շրջանակի համաձայն: Խորհուրդը համաձայնության է եկել, որ 2020 թ. հունվարից 2021 թ. դեկտեմբերն ընկած ժամանակամիջոցում վավերացման թեման կլինի իրականացնող երկրի կողմից նախնական մի շարք չափանիշների բավարարման հանգամանքը և իրական սեփականատերերի բացահայտման գործառույթի ամրապնդմանը վերաբերող առաջարկություններ ներկայացնելը:

Այս գնահատականը վերաբերում է միայն 2.5 պահանջին: ԱՃԹՆ-ի մյուս պահանջների մասով առաջընթացը և հնարավոր թերացումները հաշվի չեն առնվել:

Գնահատման նախագծի անգլերեն տարբերակը բազմաշահառու խմբին կարծիքի է ուղարկվել 2021 թ. փետրվարի 18-ին: Հայերեն թարգմանությունն ուղարկվել է 2021 թ. փետրվարի 26-ին: ԲՇԽ-ի դիտարկումները ստանալուց հետո փաստաթուղթը կվերջնականացվի՝ ԱՃԹՆ-ի խորհրդի վերանայմանը ներկայացնելու համար:

3. Իրական սեփականությանը վերաբերող 2.5 պահանջի գնահատում

Վավերացման գործընթացում, Խորհրդի կողմից 2019 թ. հունիսին հավանության արժանացած շրջանակին համապատասխան, գնահատվել է հավատարմությունը իրական սեփականությանը վերաբերող 2.5 պահանջին 2020 թ. հունվարի 1-ի դրությամբ:[3] Գնահատումը կազմված է տեխնիկական գնահատականից, որի առանցքում նախնական չափանիշներն ու արդյունավետության գնահատականն է:

[1] Խորհրդի որոշում թիվ 2019-48/BM-43: https://eiti.org/board-decision/2019-48.
[2] Խորհրդի որոշում թիվ 2020-83/BM-48: https://eiti.org/board-decision/2020-83.
[3] https://eiti.org/document/assessing-implementation-of-eitis-beneficial-ownership-requirement.

Տեխնիկական գնահատական

Տեխնիկական գնահատականը ներկայացված է հավելված «Ա»-ում:

Հայաստանը՝ ԱՃԹՆ-ի և ԲԿԳ շրջանակներում ստանձնել է իրական սեփականությունը բացահայտելու պարտավորություն, ինչպես նաև «Open Ownership»-ի հետ ստորագրել է փոխըմբռնման հուշագիր (ՓՀ): Իրական սեփականության դաշտում թափանցիկության հասնելու նպատակով Հայաստանը, ՎԶԵԲ-ի աջակցությամբ, սկսել է օրենսդրության վերլուծության և իրական սեփականատերերի բացահայտման ճանապարհային քարտեզի մշակման գործընթաց, որն այնուհետև ձևակերպվել է կառավարության արձանագրային որոշմամբ:

Հիմք ընդունելով իրական սեփականության վերաբերյալ օրենսդրության վերանայման արդյունքներն ու ճանապարգային քարտեզը՝ Հայաստանը համաձայնության է եկել «իրական սեփականություն» եզրույթի սահմանման շուրջ, որը համապատասխանում է 2019թ. ԱՃԹՆ-ի ստանդարտին: Իրական սեփականության դաշտում բարեփոխումները խթանելու նպատակով ստեղծվել է ԻՍ հարցերով միջգերատեսչական աշխատանքային խումբ, և 2018-2020 թվականներին մի շարք փոփոխություններ են կատարվել համապատասխան օրենսդրությունում: Դա թույլ է տվել ի լրումն «իրական սեփականատեր» հասկացության սահմանման ներառել նաև «քաղաքական ազդեցություն ունեցող անձ», «փոխկապակցված իրավաբանական և ֆիզիկական անձ», «փոխկապակցված անձ» և «միջնորդավորված իրավաբանական անձ» սահմանումները:

2020 թվականից սկսած՝ ընդերքօգտագործման իրավունքի դիմող կամ այդ իրավունքը ստացած բոլոր ընկերություններն օրենքի պահանջով պարտավոր են իրական սեփականության մասին տեղեկություն ներկայացնել ՀՀ արդարադատության նախարարության Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալություն: 2020 թվականին այս տեղեկատվությունը ներկայացվել է թղթային ձևաչափով, և ներկայացված տեղեկությունների ընդհանուր նկարագրությունը լավ փաստաթղթագրված է ԱՃԹՆ-ի 2018 թ. զեկույցում և եռամսյակային հաշվետվություններում: 2021 թվականից սպասվում է, որ իրական սեփականատերերի մասին հայտարարագրերը կներկայացվեն ՀՀ արդարադատության նախարարության կողմից վարվող առցանց ռեգիստրի միջոցով: Առցանց ռեգիստրը փորձարկվել է 2020 թվականից դեկտեմբերից և ակնկալվում է, որ այն կօգտագործվի բացահայտումների երկրորդ շրջանի համար:

Հայտարարագրի ձևում նախատեսվում է ներկայացնել այնպիսի տեղեկություններ, ինչպիսիք են՝ քաղաքացիություն, ամբողջական անուն, ծննդյան ամսաթիվ/տարի, հերթական համար, նույնականացման փաստաթղթի տրման ամսաթիվ, գրանցված հասցե, բնակության վայր, պայմանագրային տվյալներ, քաղաքական ազդեցություն ունեցող անձանց մասին տեղեկություններ և այլն: Բացի այդ, հայտարարագրի ձևը պարունակում է տվյալների դաշտ, որը թույլ է տալիս ներկայացնել ֆոնդային բորսայի անվանումը և ֆոնդային բորսայի փաստաթղթերը՝ հրապարակային ցուցակված ընկերությունների մասով: Տեղեկատվության մեծ մասը, բացառությամբ անձնական տվյալների, օր.՝ անձնագիր, գրանցման և բնակության հասցե, կոնտակտային տվյալ, հրապարակային է:

Ըստ ԲՇԽ-ի ինքնագնահատման ձևաթղթի, կարծես թե, որոշակի սխալներ են թույլ տրվել բացահայտումների առաջին փուլում, և տարածքային կառավարման նախարարությունը

(ՏԿԵՆ) նախազգուշացումներ է ուղարկել համապատասխան ընկերություններին: Սպասվում է, որ այս խնդիրների մեծ մասը կվերանա էլեկտրոնային հայտարարագրման ձևի միջոցով, որը թույլ է տալիս տեղեկատվության մի մասը ներբեռնել կամ համեմատել այլ տվյալների շարքերի հետ: Իրական սեփականատերերի մասին տեղեկություններ չներկայացնելու կամ կեղծ կամ ոչ լիարժեք տեղեկություններ ներկայացնելու դիմաց պատժամիջոցները մանրամասն ներկայացված են ԱՃԹՆ-ի 2018 թ. զեկույցում:

Զեկույցում նշվել է նաև ընդերքօգտագործման իրավունք ունեցող իրավաբանական անձանց մասնաբաժինների օտարման և ձեռք բերման հարցի կարևորությունը և վերջերս կատարված օրենսդրական փոփոխությունները, ըստ որի ցանկացած փոփոխություն պետք է արտացոլվի ռեգիստրում: Միևնույն ժամանակ նշվել է, որ այս գործընթացի նկատմամբ կան պետական վերահսկողության սահմանափակ մեխանիզմներ:

Իրավական սեփականության մասին տեղեկությունները կարելի է ՀՀ արդարադատության նախարարության Իրավաբանական անձանց պետական ռեգիստրից ստանալ փոքր վճարի դիմաց: Հարցված շահագրգիռ կողմերը նշել են, որ ռեգիստրը իրավական սեփականության մասին տեղեկություններ է տալիս սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների (ՍՊԸ-ների) մասով: Բայցևայնպես, սա չի ներառում փակ բաժնետիրական ընկերությունների (ՓԲԸ-ների) իրավական սեփականատերերի մասին տվյալները: Այս հարցը քննարկվել է ԲՇԽ-ի կողմից, և 2016-2017 թթ. ԱՃԹՆ զեկույցի համար ՓԲԸ-ներին առաջարկվել է կամավոր հիմունքով բացահայտել իրենց իրավական սեփականատերերին: Այդուհանդերձ, որևէ ընկերություն հարցված բացահայտումը չի կատարել: Այս հարցի լուծման համար կպահանջվեն հետագա օրենսդրական բարեփոխումներ:

Արդյունավետության գնահատում

Հայաստանը, ԱՃԹՆ-ին միանալուց ի վեր, արտահայտել է իրական սեփականության մասով թափանցիկություն ապահովելու լուրջ հանձնառություն: Իրական սեփականության մասով բարեփոխումները համահունչ են նաև Հայաստանի հակակոռուպցիոն օրակարգին[4]:

Բացի այդ, 2018-2020 թթ. ԲԿԳ գործողությունների ծրագրի[5] շրջանակներում Հայաստանը նաև պարտավորվել է ձևավորել իրական սեփականատերերի բաց և հրապարակային ռեգիստր, ինչպես նաև երկիրը ԲԿԳ իրական սեփականության բլոկն առաջնորդող խմբի անդամ է[6]: Այս բարեփոխումների իրականացումը դյուրացնելու նպատակով 2018 թ. մարտին ձևավորվել է իրական սեփականության հարցերով զբաղվող միջգերատեսչական աշխատանքային խումբ[7]:

Կառավարության, կազմակերպությունների և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների արդյունավետ համագործակցության արդյունքում՝ 2019 թ. ապրիլին ՀՀ ազգային ժողովը (խորհրդարանը) ընդունեց իրական սեփականատերերի բացահայտումն

[4] Հայաստանի 2019-2022 թթ. հակակոռուպցիոն գործողությունների ծրագիր, էջ 20-21. Կայք՝ https://www.moj.am/storage/files/pages/pg_7105326429692_Anti-Corruption_Action_Plan_03.10.2019_ENG.pdf.
[5] 2018-2020 թթ. Հայաստանի ԲԿԳ գործողությունների ծրագիր: Կայք՝ http://ogp.am/u_files/file/OGP_2018_2020_eng.pdf.
[6] ԲԿԳ իրական սեփականատերերի բլոկն առաջնորդող խումբ https://www.openownership.org/what-we-do/the-beneficial-ownership-leadership-group/
[7] Իրական սեփականատերերի հարցերով զբաղվող միջգերատեսչական աշխատանքային խմբի կազմը տե՛ս https://www.eiti.am/en/msg-working-groups:

ապահովող օրենսդրական փոփոխությունների փաթեթը: Այդ պահից սկսած Հայաստանի ԱՃԹՆ-ն՝ ՀՀ արդարադատության նախարարության, տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության, ինչպես նաև այլ շահագրգիռ կողմերի հետ համատեղ ակտիվորեն աշխատել է իրական սեփականատերերի մասին տեղեկություններ հավաքելու և իրական սեփականատերերի ռեգիստր ձևավորելու ուղղությամբ:

Իրական սեփականատերերի վերաբերյալ տվյալների հավաքագրումն ինտեգրվել է նաև ընդերքօգտագործման իրավունքների դիմելու գործընթացում: Կառավարությունը հավակնություն ունի իրական սեփականության մասով բարեփոխումները տարածելու այլ ոլորտներում՝ հիմնվելով հանքարդյունաբերության ոլորտում կատարված պիլոտի վրա [8]: Բացահայտումների առաջին շրջանն իրականացվել է 2020 թվականի սկզբին: Տվյալներն այժմ հրապարակվում են PDF ձևաչափով, մինչ մշակվում է առցանց ռեգիստրը: Կառավարությունն առցանց ռեգիստրի մատչելիության, ճշգրտության և օգտագործելության գործառույթները մշակում է համագործակցելով «Open Ownership»-ի հետ: Դա հիմնված է ԻՍ գործող ռեգիստրներ ունեցող երկրների լավագույն փորձի վրա: Ակնկալվում է, որ ռեգիստրի գործարկմամբ զգալիորեն կբարելավվեն իրական սեփականությունը վերլուծելու հնարավորությունները:

2018 թ. ԱՃԹՆ-ի զեկույցում, ինչպես նաև տարեկան և եռամսյակային ընթացիկ հաշվետվություններում ներկայացված է բացահայտումների ընդհանուր նկարագրությունը և օրենսդրական շրջանակի ու փաստացի հաշվետվողականության հիմնական թերությունների վերաբերյալ մեկնաբանություն: Օրինակ, 2020 թ. երրորդ եռամսյակի հաշվետվությունում փաստաթղթագրված է 2020 թ. հոկտեմբերի դրությամբ ներկայացված հայտարարագրերում բացակայող տեղեկությունները: 2018 թ. ԱՃԹՆ-ի զեկույցում նշված է վավերացման գործընթացի հետագա ամրապնդման անհրաժեշտության մասին՝ ավելի շեշտադրելով տրամադրվող տվյալների հուսալիությունն ու ճշգրտությունը: ԲՇԽ-ի ինքնագնահատման ձևաթղթում նշված է, որ հաշվետվություններում տեղ գտած թերությունները հիմնականում վերաբերում էին տեխնիկական սխալների, և որ առցանց հաշվետվության ձևում այդ սխալներից որոշները պետք է որ շտկվեն՝ գործընթացի ավտոմատացմամբ: Հարցված շահագրգիռ կողմերը նաև նշել են, որ օրենսդրական փոփոխությունների փաթեթը մշակվել է 2020 թվականի վերջին[9] և առաջարկվող փոփոխությունների շուրջ հանրային քննարկումները նախատեսվում է կազմակերպել 2021 թվականի սկզբին:

2020 թվականի դեկտեմբերից համապատասխան շահագրգիռ կողմերին ներկայացվել և նրանց հետ քննարկվել է իրական սեփականատերերի հայտարարագրերի ներկայացման առցանց հարթակի փորձնական տարբերակը [10]: Ըստ օրենսդրության՝ բացահայտումների հաջորդ շրջափուլն ակնկալվում է ավարտին հասցնել մինչև 2021 թվականի փետրվարը: ԲՇԽ-ի ինքնագնահատման ձևաթղթում նշված է, որ ԻՍ հայտարարագրերի ներկայացման առցանց հարթակը կունենա տվյալների ավտոմատ ստուգաճշտման ֆունկցիաներ: Օրինակ, «*Հայաստանի քաղաքացիների տվյալներն ավտոմատ կերպով ստուգվելու են քաղաքացիների*

[8] ՀՀ արդարադատության նախարարություն (2019թ.), «Քննարկվել են իրական սեփականատերերի բացահայտմանը նպատակաուղղված իրավական կարգավորումները», տե՛ս https://www.moj.am/article/2240:
[9] Իրական սեփականության վերաբերյալ օրենսդրության փոփոխությունների նախագիծը 2020 թ. նոյեմբերի դրությամբ, կայք՝ https://www.e-draft.am/projects/2818:
[10] Հայաստանի ԱՃԹՆ (2020թ.), «Հայաստանի ԱՃԹՆ-ն այժմ փորձարկում է ԻՍ էլեկտրոնային հայտարարագրման հարթակը»: Կայքը՝ https://www.eiti.am/en/news/2020/12/04/eiti-armenia-is-testing-the-bo-online-declaration-platform/101/:

անձնագրային տվյալների բազայի հետ, Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունում գրանցված կազմակերպությունների տվյալներն ավտոմատ գեներացվելու են ԻՍ էլեկտրոնային հայտարարագրերի համապատասխան դաշտերում, ԻՍ էլեկտրոնային հայտարարագրերի դաշտերը կունենան մուտքագրվող տվյալների սահմանափակումներ (թվային, տեքստային դաշտեր)» և այլն: Սա պետք է որ զգալիորեն նվազեցնի սխալ մուտքագրվող տվյալների շրջանակը:

Ավելին, կան իրական սեփականատերերի մասին տեղեկությունների շուրջ հանրային դեբատի ապացույցներ, որոնք ներկայացված են հավելված 2-ում թվարկված հոդվածներում: Ազգային քարտուղարությունը, ինչպես նաև կառավարությունը, ընկերությունների և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները ևս ակտիվորեն համագործակցում են ոլորտի փորձագետների հետ, ինչպիսին «Open Ownership»-ն է, որպեսզի ապահովեն իրական սեփականության մասով թափանցիկության շարունակական բարելավումը:

Քարտուղարության գնահատականը

Հայաստանը համաձայնության է եկել «իրական սեփականատեր» հասկացության սահմանման շուրջ, որը համապատասխանում է 2019 թ. ԱՃԹՆ-ի ստանարտին: Մետաղական հանքարդյունաբերական ընկերություններից, այդ թվում՝ ընդերքօգտագործման թույլտվություն ստանալու դիմած ընկերություններից պահանջվել է իրական սեփականատերերի մասին տեղեկությունները ներկայացնել 2020 թվականից սկսած: Բացահայտումների առաջին շրջափուլը կատարվել է 2020 թվականին, և իրական սեփականատերերի մասին տեղեկությունները ՀՀ արդարադատության նախարարության պետական ռեգիստր են ներկայացվել թղթային տարբերակով: Տեղեկություններն այնուհետև հրապարակվել են առցանց և հասանելի են հանրությանը: 2021 թվականից ակնկալվում է, որ բոլոր հետագա բացահայտումների համար կձևավորվի իրական սեփականության տվյալների առցանց հարթակ: Հայաստանի ԱՃԹՆ-ն և համապատասխան մյուս շահագրգիռ կողմերը հանգամանորեն վերլուծել են 2020 թվականին բացահայտված՝ իրական սեփականության մասին տվյալներն ու առաջարկել են համապատասխան օրենսդրության լրացուցիչ փոփոխություններ: Բացահայտման հետ կապված հիմնական թերությունները հասանելի են ԱՃԹՆ-ի զեկույցներում, ինչպես նաև տարեկան և եռամսյակային ընթացիկ հաշվետվություններում:

Թեև իրավական սեփականատերերի մասին տեղեկատվությունը պետական ռեգիստրում առկա է միայն որպես սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն գրանցված կազմակերպությունների համար, սակայն միջգերատեսչական քննարկումներ են ընթանում փակ բաժնետիրական ընկերությունների իրական սեփականատերերի մասին տեղեկատվության բացահայտումն ապահովելու ուղղությամբ: Հարկ է նկատել, որ ընդերքօգտագործման լիցենզիա ստացած ընկերությունների կեսից ոչ ավելին (10/26) է գրանցված որպես փակ բաժնետիրական ընկերություն, և այս բոլոր ընկերությունների իրական սեփականատերերի մասով կան տեղեկություններ: Թեև փակ բաժնետիրական ընկերությունների իրավական սեփականատերերի մասին հանրային տեղեկությունների պակասը թերություն է իրական սեփականության Վավերացման շրջանակի 1-ին փուլի պահանջների համեմատ, Միջազգային քարտուղարությունը համարում է, որ երկրի

արդյունահանող ճյուղերում գործունեություն ծավալող ընկերությունների իրական տերերի ու վերահսկող անձանց մասին հանրության իրազեկությունն ապահովող շրջանակի ձևավորման ընդգրկուն նպատակը կատարվել է՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ մետաղական հանքարդյունաբերության ոլորտի բոլոր ընկերությունների իրական սեփականատերերի վերաբերյալ տեղեկատվությունը հարցվել է: Արժևորելով բոլոր արդյունահանող ընկերությունների իրավական սեփականատերերի մասին տվյալների առկայության մեջ տեղ գտած թերությունները շտկելու կառավարության պլանները և ամեն ինչ կշռադատելով՝ Քարտուղարությունը տվել է նախնական գնահատականն առ այն, որ Հայաստանը «զգալի առաջընթաց» է գրանցել 2.5 պահանջի իրագործման առաջնային չափանիշները կատարելու ուղղությամբ: 2022 թվականի հունվարից հետո 2.5 պահանջի վավերացման երկրորդ փուլին նախապատրաստվելու ընթացքում Հայաստանից պահանջվում է բացահայտել արդյունահանման լիցենզիա ստացած կամ լիցենզիայի դիմած բոլոր ընկերությունների իրավական և իրական սեփականատերերին, ներառյալ փակ բաժնետիրական ընկերությունների իրավական սեփականատերերին: Հայաստանին հորդորում ենք ուժեղացնել ստուգաճշտման ընթացակարգերի և տվյալների որակի մասով տարվող ընթացիկ աշխատանքները, այդ թվում՝ հանքարդյունաբերական ընկերությունների հետ լրացուցիչ խորհրդակցությունների և գործընթացի ավտոմատացման միջոցով:

Հավելված «Ա». տեխնիկական գնահատական

ԱՃԹՆ-ի պահանջ. Իրական սեփականության բացահայտում (#2.5)			
ԱՃԹՆ-ի ենթապահանջ	**Հիմնական եզրահանգումների համառոտագիր**	**Տեղեկատվության աղբյուր(ներ)**	**Շահագրգիռ կողմերի տեսակետների համառոտագիր (եթե կիրառական է)**
ԲՇԽ-ն համաձայնության է եկել «իրական սեփականատեր» եզրույթի պատշաճ, հրապարակային սահմանման շուրջ (#2.5.գ)	2018-2020[11] թվականներին «իրական սեփականատեր» եզրույթը սահմանելու և իրական սեփականատերերի բացահայտման ոլորտի համապարփակ կարգավորում ապահովելու նպատակով մի շարք փոփոխություններ են կատարվել համապատասխան օրենքներում, այդ թվում՝ Ընդերքի մասին օրենսգիրք, «Իրավաբանական անձանց, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների պետական գրանցման, ընկերությունների և անհատ ձեռնարկատերերի պետական գրանցման մասին» ՀՀ օրենք (հետայսու՝ «Իրավաբանական անձանց պետական	Հայաստանի ԱՃԹՆ կայք (2019 թ.), «Մետաղական հանքարդյունաբերության ոլորտի ընկերությունների իրական սեփականատերերի բացահայտումն այսուհետև կիրականացվի օրենքով սահմանված պարտադիր պահանջով»: Հղումը՝ https://www.eiti.am/en/news/2019/04/23/disclosure-of-beneficial-owners-of-metal-mining-companies-will-be-made-on-mandatory-demand-defined/60/	Հայաստանի առաջին վավերացման գործընթացում հարցված շահագրգիռ կողմերը հաստատել են, որ «իրական սեփականատիրոջ» սահմանումը լայնորեն քննարկվել է ԲՇԽ-ի և ԻՍ միջգերատեսչական աշխատանքային խմբի նիստերի ընթացքում:

[11] Հայաստանի օրենսդրությամբ տրված է «իրական սեփականատիրոջ» երկու սահմանում. մեկը ներկայացված է «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքում, իսկ մյուսը՝ «Իրավաբանական անձանց պետական գրանցման մասին» ՀՀ օրենքում: Սույն գնահատման նպատակով հաշվի է առնվելու «Իրավաբանական անձանց պետական գրանցման մասին» ՀՀ օրենքում տրված սահմանումը:

	գրանցման մասին» ՀՀ օրենք) և «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենք: Իրական սեփականատերը սահմանվում է որպես ֆիզիկական անձ, որը՝ ա. առանձին կամ փոխկապակցված անձի հետ համատեղ վերահսկում կամ տիրապետում է իրավաբանական անձի կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալի առնվազն 10 տոկոս մասնակցության, այդ թվում՝ փայերին, բաժնեմասերին, բաժնետոմսերին կամ քվեարկության իրավունքին կամ տվյալ իրավաբանական անձի մասնակից կամ բաժնետեր իրավաբանական անձանց կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալում մասնակցության առնվազն 10 տոկոս հանրագումարին, բ. վերահսկում է իրավաբանական անձին կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալում մասնակցություն ունենալու փաստի ուժով՝ արտոնյալ բաժնետոմսերի կամ մեկ ձայնից ավելի ձայնի իրավունք տվող քվեարկող բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայի, այսուհետ՝ բաժնետոմս) կամ այլ արժեթղթերի միջոցով, գ. ստանում է իրավաբանական անձի տարեկան հասույթի առնվազն 15 տոկոսը,	«Իրավաբանական անձանց, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների պետական գրանցման, ընկերությունների և անհատ ձեռնարկատերերի պետական գրանցման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին օրենք: Հղումը՝ https://www.eiti.am/file_manager/EITI%20Documents/Beneficial%20Ownership/StateRegister_eng_non_official.pdf Հայաստանի ԱՃԹՆ (2017թ.), «Հայաստանի իրական սեփականության մասին օրենսդրության ուսումնասիրություն»: Հղումը՝ https://www.eiti.am/file_manager/EITI%20Documents/Beneficial%20Ownership/EN_Legal%20Report%20EITI%20Armenia%20Final%20Report%20EXE.pdf Հայաստանի ԱՃԹՆ (2018թ.), «Իրական սեփականատերերի բացահայտման Հայաստանի	

	դ. իրավասու է նշանակելու կամ ազատելու իրավաբանական անձի կառավարման մարմիններում ընդգրկված անձանց, ե. իրավաբանական անձի կառավարման մարմիններում ընդգրկված չլինելով՝ հնարավորություն ունի ազդելու իրավաբանական անձի կառավարման վրա, վերահսկելու կառավարումը կամ իրավաբանական անձի գործունեությունը կամ իրավասու է կանխորոշելու իրավաբանական անձի որոշումներն այլ միջոցներով, ներառյալ՝ հավատարմագրային կառավարման պայմանագրի, համատեղ գործունեության պայմանագրի, օպցիոնի պայմանագրի, բաժնետոմսերի (բաժնեմասերի) փոխարկվող պարտքի տրամադրման պայմանագրի և այլ միջոցներով: Բավական շատ ապացույցներ կան այն մասին, որ ԲՇԽ-ն ակտիվորեն ներգրավված է եղել համապատասխան օրենսդրության վերանայման և «իրական սեփականատիրոջ» սահմանման ընդունման գործընթացում: Օրինակ՝ 2017-2018 թվականներին, Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի (ՎԶԵԲ) օժանդակությամբ, Հայաստանի ԱՃԹՆ-ն	ճանապարհային քարտեզ»: Հղումը՝ https://www.eiti.am/file_manager/EITI%20Documents/Beneficial%20Ownership/BO%20Roadmap_EN.pdf Հայաստանի ԱՃԹՆ (2017թ.), ԲՇԽ-ի 2017 թ. դեկտեմբերի 6-ի նիստի արձանագրություն: Հղումը՝ https://www.eiti.am/file_manager/EITI%20Documents/Minutes/MSG_meeting_minutes_06_12_2017_eng.pdf Հայաստանի ԱՃԹՆ (2018թ.): ԲՇԽ-ի 2018 թ. հուլիսի 31-ի նիստի արձանագրություն: Հղումը՝ https://www.eiti.am/file_manager/EITI%20Documents/Minutes/MSG_meeting_minutes_31_07_2018_eng.pdf	

	պատվիրեց իրական սեփականությունը կարգավորող օրենսդրության ուսումնասիրություն և մշակեց իրական սեփականատերերի բացահայտման ճանապարհային քարտեզ: Այն պարունակում է «իրական սեփականատեր» եզրույթի սահմանման առաջարկ, ինչպես նաև հանքարդյունաբերության ոլորտում իրական սեփականատերերի բացահայտման գործողությունների ժամանակացույց: Ճանապարհային քարտեզն այնուհետև ձևակերպվել է ՀՀ կառավարության արձանագրային որոշմամբ: «Իրական սեփականատիրոջ» սահմանումը համակողմանիորեն քննարկվել է ԲՇԽ-ի ներկայացուցիչների կողմից՝ ԲՇԽ-ի և ԻՍ միջգերատեսչական աշխատանքային խմբի նիստերի ընթացքում:		
Կան օրենքներ, ենթաօրենսդրական ակտեր կամ քաղաքականություններ, որոնք նախատեսում են իրական սեփականատերերի	*«Իրավաբանական անձանց պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի պահանջով բոլոր ընկերությունները պետք է իրենց իրական սեփականատերերի մասին տեղեկատվություն ներկայացնեն Իրավաբանական անձանց պետական ռեգիստր:*	*Հայաստանի ինքնագնահատման ձևաթուղթ, որը ներկայացվել է Միջազգային քարտուղարություն:* «Իրավաբանական անձանց, իրավաբանական անձանց առանձնացված	

պետական ռեգիստրի ստեղծումն ու վարումը (#2.5.ա)	*Պետական ռեգիստրը հետևաբար պատասխանատու է իրական սեփականատերերի մասին տեղեկատվության հրապարակման համար, բացառությամբ՝ անձնական տեղեկությունների: Իրական սեփականատերերի բաց և հրապարակային ռեգիստրի ստեղծումը եղել է 2018-2020 թվականների ԲԿԳ գործողությունների ծրագրով ստանձնած պարտավորություններից մեկը: Այս հանձնառությունը հետևողականորեն հնչեցվել է և վերահաստատվել կառավարության ներկայացուցիչների կողմից[12]:* *Վերանայված օրենսդրության պայմաններում բացահայտումների առաջին շրջանը տեղ է գտել 2020 թվականին: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ռեգիստրի ծրագրակազմի մշակման աշխատանքները 2020 թվականին դեռ ընթացքի մեջ էին, բոլոր հայտարարագրերը լրացվում և ՀՀ արդարադատության նախարարություն էին ներկայացվում թղթային*	ստորաբաժանումների պետական գրանցման, ընկերությունների և անհատ ձեռնարկատերերի պետական գրանցման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին օրենք: Հղումը՝ *https://www.eiti.am/file_manager/EITI%20Documents/Beneficial%20Ownership/StateRegister_eng_non_official.pdf* *ԲԿԳ-ի հայաստանյան գործողությունների 2018-2020թթ. Ծրագիր: Հղումը՝ https://www.opengovpartnership.org/documents/armenia-action-plan-2018-2020/* *Հայաստանի ԱՃԹՆ (2020թ.): «ԱՃԹՆ Հայաստանը թեստավորում է իրական սեփականատերերի առցանց հայտարարագրման համակարգը»: Հղումը՝ https://www.eiti.am/en/news/2020/12/04/eiti-armenia-is-testing-the-*	

[12] Տե՛ս, օրինակ՝ https://transparency.am/en/press/view/83, https://armla.am/en/3640.html:

	տարբերակով: Ռեգիստրը վերջերս է ձևավորվել և փորձարկվում է: Ակնկալվում է, որ ռեգիստրը իրական սեփականատերերի բացահայտման համար կօգտագործվի 2020 ֆինանսական տարուց:	*bo-online-declaration-platform/101/* *Հայաստանի ԻՍ ռեգիստր: Հղումը՝ https://bor.vxsoft.com/am/auth*	
Իրական սեփականատերերի բացահայտման պետական քաղաքականությունը և բազմաշահառու խմբի քննարկումները փաստաթղթագրված են (#2.5.բ)	Իրական սեփականատերերի բացահայտման պետական քաղաքականությունը և ԲՇԽ-ի քննարկումները լավ փաստաթղթավորված են հանրությանը հասանելի աղբյուրներում: Օրինակ՝ ԱՃԹՆ-ի 2016-2017 թթ. և 2018 թ. զեկույցներում փաստաթղթագրված է պետական քաղականությունը և նկարագրված են նախատեսվող օրենսդրական բարեփոխումները: Զեկույցներում նաև ընդհանուր ներկայացված են ԻՍ միջգերատեսչական աշխատանքային խմբի գործողությունները: Ավելին, իրական սեփականության մասով պահանջի կատարման ուղղությամբ առաջընթացը լավ փաստաթղթագրված է տարեկան և եռամսյակային հաշվետվություններում,	Հայաստանի ԱՃԹՆ (2019թ.), «2016-2017թ.Հայաստանի ԱՃԹՆ-ի զեկույց»: Հղումը՝ https://www.eiti.am/en/annual-reports/2018 Հայաստանի ԱՃԹՆ (2020թ.), «2018 թ.Հայաստանի ԱՃԹՆ-ի զեկույց»: Հղումը՝ https://www.eiti.am/en/annual-reports/2020 Հայաստանի ԱՃԹՆ-ի կայք, տարեկան և եռամսյական հաշվետվություններ: Հղումը՝ https://www.eiti.am/en/Quarterly-annual-reports Հայաստանի ԱՃԹՆ-ի կայք, ԲՇԽ-ի նիստի արձանագրություն: Հղումը՝	

	ինչպես նաև ԲՇԽ-ի նիստերի արձանագրություններում: Ի լրումն ԱՃԹՆ-ի և ԲԿԳ շրջանակներում ստանձնած պարտավորությունների՝ Հայաստանը 2019 թ. հոկտեմբերին փոխըմբռնման հուշագիր ստորագրեց «OpenOwnership»-ի հետ: Իրական սեփականության թափանցիկություն ապահովելու ՀՀ կառավարության հանձնառությունը ընդգծված է նաև ԲՇԽ-ի ինքնագնահատման ձևաթղթում: Նշվել է նաև, որ նախատեսվում է ի լրումն հանքարդյունաբերության ոլորտի իրական սեփականատերերի բացահայտումներ կատարել երկրի բոլոր ոլորտներում: Ավելին, իրական սեփականության մասով գործողությունները, կարծես թե, համահունչ են ՀՀ կառավարության 2019 թ. ընդունած հակակոռուպցիոն ռազմավարությանը:	https://www.eiti.am/en/agenda-protocols-other-related-documents OpenOwnership (2019), «Հայաստանը փոխըմբռնման հուշագիր է ստորագրում OpenOwnership-ի հետ»: Հղումը՝ https://www.openownership.org/news/armenia-signs-mou-with-openownership/ Հայաստանի ինքնագնահատման ձևաթուղթ: Ներկայացվել է Միջազգային քարտուղարությանը: Եվրոպայի խորհուրդ (2019թ.), «Նոր հակակոռուպցիոն ռազմավարություն և կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով Հայաստանում» Հղումը՝ https://www.coe.int/en/web/corruption/-/new-anticorruption-strategy-and-establishment-of-corruption-prevention-commission-in-armenia	
Իրականացնող երկիրը կատարել է իրական	Ըստ ԲՇԽ-ի ինքնագնահատման ձևաթղթի՝ երկրաբանական	Հայաստանի ինքնագնահատման ձևաթուղթ: Ներկայացվել է	.

սեփականության մասին տեղեկատվությունը հանրայնացնելու հարցում (#2.5.գ)	ուսումնասիրության կամ մետաղական հանքերի շահագործման թույլտվություն ունեցող ստացած բոլոր ընկերությունները, ինչպես նաև նոր թույլտվության դիմած ընկերությունները պարտավոր են տեղեկատվություն հրապարակել իրենց իրական սեփականատերերի մասին: 2020 թվականին բոլոր այն ընկերությունները, որոնք պարտավոր էին իրական սեփականատերերի մասին տեղեկություններ ներկայացնել, հայտարարագրեր են ներկայացրել թղթային տարբերակներով, որոնք հրապարակվել են ՀՀ արդարադատության նախարարության Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության կայքում: Ըստ ԲՇԽ-ի ինքնագնահատման ձևաթղթի, 2020 թ. սեպտեմբերին Հայաստանում հայտարարված ռազմական դրության պատճառով իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կայքը չի գործել մինչև 2020 թ. դեկտեմբերի վերջը՝ անձնական տվյալները պաշտպանելու նպատակով: Այդուամենայնիվ, այդ ընթացքում ԱՃԹՆ-	Միջազգային քարտուղարությանը: ՀՀ արդարադատության նախարարության Իրավաբանական անձանց պետական ռեգիստր: Հղումը՝ http://www.e-register.am/. Նաև հասանելի է ազգային ԱՃԹՆ-ի կայքում՝ https://www.eiti.am/hy/%D4%BB%D5%8D-%D5%B0%D5%A1%D5%B5%D5%BF%D5%A1%D6%80%D5%A1%D6%80%D5%A1%D5%A3%D5%A5%D6%80/?tab=88	

	ի հայաստանյան կայքում մետաղական հանքեր շահագործող ընկերությունների ԻՍ նոր հայտարարագրերի հրապարակումը եղել է 2020 թ. դեկտեմբերի 3-ի դրությամբ:		
Հարցված տեղեկությունը ներառում է նրանց իրական սեփականատիրոջ (տերերի) նույնականացման տվյալներ, այդ թվում՝ քաղաքացիություն, բնակության երկիր, քաղաքական ազդեցություն ունեցող անձանց նույնականացում և մանրամասներ այն մասին, թե ինչպես է դրսևորվում վերահսկողությունը կամ սեփականությունը (#2.5.գ-դ)	Այո, հարցված տեղեկատվությունը նախատեսում է համապատասխան իրական սեփականատիրոջ (տերերի) նույնականացման տվյալներ, այդ թվում՝ քաղաքացիություն, բնակության երկիր և քաղաքական ազդեցություն ունեցող անձանց, ինչպես նաև փոխկապակցված անձանց նույնականացում, սեփականության մակարդակը և մանրամասներ, թե ինչպես է դրսևորվում սեփականությունը կամ վերահսկողությունը: Բոլոր տեղեկությունները հասանելի են հանրությանը, բացառությամբ այնպիսի անձնական տվյալների, ինչպիսիք են անձնագիր, գրանցման և բնակության հասցեներ և կոնտակտային տեղեկություններ:	Հայաստանի ինքնագնահատման ձևաթուղթ: Ներկայացվել է Միջազգային քարտուղարությանը: Հայաստանի ԱՃԹՆ-ի կայք: Իրական սեփականության հայտարարագրի ձև, ոչ պաշտոնական թարգմանություն անգլերենից: Հղումը՝ https://www.eiti.am/file_manager/EITI%20Documents/Beneficial%20Ownership/BO_declaration_Armenia_eng_non_official.pdf	
Իրավաբանական անձ հանդիսացող ցանկացած կազմակերպություն, որը	2018 թ. ԱՃԹՆ-ի զեկույցում և Հայաստանի ԱՃԹՆ-ի կայքում ընդհանուր ներկայացված են այն	Հայաստանի ԱՃԹՆ (2020թ.), «2018 թ. Հայաստանի ԱՃԹՆ-ի զեկույց»: Հղումը՝	Շահագրգիռ կողմերի հետ քննարկումներում հաստատվել է, որ ընդերքօգտագործման թույլտվության

դիմում է կամ տիրապետում է մասնակցային բաժնեմասի նավթի, գազի արդյունահանման կամ արտադրության մեջ, կամ հանքարդյունաբերական իրավունքի կամ պայմանագրի, հրապարակել է այդ տեղեկատվությունը	ընկերությունները, որոնք 2020 թ. տեղեկություն են ներկայացրել իրենց իրական սեփականատերերի մասին: 3-րդ եռամսյակային հաշվետվությունում տեղեկատվություն է ներկայացված ոչ լիարժեք տեղեկություն տալու համար (2020 թ. հոկտեմբերի դրությամբ) Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից 11 ընկերությունների նկատմամբ արձակված նախազգուշացումների վերաբերյալ:	https://www.eiti.am/en/annual-reports/2020 Հայաստանի ԱՃԹՆ կայք, իրական սեփականատերերի մասին հայտարարագրեր, հղումը՝ https://www.eiti.am/hy/%D4%BB%D5%8D-%D5%B0%D5%A1%D5%B5%D5%BF%D5%A1%D6%80%D5%A1%D6%80%D5%A1%D5%A3%D5%A5%D6%80/?tab=88 Հայաստանի ԱՃԹՆ-ի կայք, տարեկան և եռամսյակային հաշվետվություններ: Հղումը՝ https://www.eiti.am/en/Quarterly-annual-reports	դիմած կամ տիրապետող բոլոր ընկերություններին ներկայացվել է իրական սեփականատերերի մասին տեղեկություն ներկայացնելու հարցում: Ընդգծվել է նաև, որ իրական սեփականատերերի մասին հայտարարագրի ձևը ներառված է այն փաստաթղթերի փաթեթում, որը կազմակերպությունները պետք է ներկայացնեն ընդերքօգտագործման թույլտվության դիմելիս: Թերևս, որոշ ընկերություններ՝ ընդերքօգտագործման թույլտվության դիմելու գործընթացում չի ներկայացրել իրական սեփականատերերի մասին տեղեկություններ՝ չնայած նրանց նման հարցում արվել է: Միևնույն ժամանակ, իրական սեփականատերերի մասին տեղեկություն չներկայացնելը կարող է ընդերքօգտագործման թույլտվությունը մերժելու հիմք հանդիսանալ:
ԲՇԽ-ն գնահատել և փաստաթղթագրել է իրական սեփականատերերի մասին տեղեկությունների	Ըստ ԲՇԽ-ի ինքնագնահատման ձևաթղթի՝ ԲՇԽ-ն ուսումնասիրել է իրական սեփականատերերի մասին տեղեկությունները և բացահայտումներում արձանագրել է	Հայաստանի ինքնագնահատման ձևաթուղթ: Ներկայացվել է Միջազգային քարտուղարությանը:	

բացահայտման մասով բացերն ու թերացումները (#2.5.գ)	բացեր և թերացումներ: Ձևաթղթում արձանագրված է, որ թերությունները հիմնականում վերաբերում էին հայտարարագրերի ներկայացման հարցում անփորձությանը, ինչպես նաև տեխնիկական սխալներին, որոնք պայմանավորված են բաց ձևաչափի էլեկտրոնային տարբերակը լրացնելու փոխարեն թղթային ձևը լրացնելու հանգամանքով: Ձեռնարկված գործողությունների հետևյալ օրինակները ներկայացված են ինքնագնահատման ձևաթղթում. • ՀՀ արդարադատության նախարարության Իրավաբանական անձանց պետական ռեգիստր ներկայացված հայտարարագրերի ուսումնասիրության հիման վրա ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը (ՏԿԵՆ) և ԱՃԹՆ-ի ազգային քարտուղարությունը նախազգուշացումներ են ուղարկել ընկերություններին, ինչը նշանակում է, որ նրանք	Հայաստանի ԱՃԹՆ-ի կայք, տարեկան և եռամսյակային հաշվետվություններ: Հղումը՝ https://www.eiti.am/en/Quarterly-annual-reports «Թրանսպարենսի Ինթերնեշնլ» հակակոռուպցիոն կենտրոն (2020թ.), «Առաջարկություններ հանքարդյունաբերական ընկերությունների իրական սեփականատերերի բացահայտման գործընթացում արձանագրված որոշակի խնդիրների լուծման վերաբերյալ»: Հղումը՝ https://transparency.am/files/publications/1592292171-0-852077.pdf?v=4 Իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայք: Իրական սեփականության մասին օրենսդրության փոփոխությունների նախագիծ:	

	պետք է լիարժեք հայտարարագիր ներկայացնեն տվյալ նախազգուշական գրությունը ստանալուց հետո 90 օրվա ընթացքում, հակառակ դեպքում ընկերության ընդերքօգտագործման թույլտվությունը կկասեցվի: Արձակված նախազգուշացումների և հաջորդիվ լրամշակված հայտարարագրերի մասին տեղեկատվություն կա 2020 թ. 3-րդ եռամսյակի հաշվետվությունում: • ԲՇԽ-ի ՔՀԿ խմբակցությունը մի փաստաթուղթ է մշակել ԻՍ հայտարարագրերի ներկայացման գործընթացում առկա անհամապատասխանությունների , ինչպես նաև ընդհանուր սկզբունքների և մոտեցումների վերաբերյալ, որոնք ներկայացվել են շահագրգիռ կողմերին: • Վերը նշված ուսումնասիրությունների և այլ առաջարկությունների, ինչպես	Հղումը՝ https://www.e-draft.am/projects/2818 «ԹԻ Հայաստան», «Առաջարկություններ հանքարդյունաբերական ընկերությունների իրական սեփականատերերի բացահայտման գործընթացում արձանագրված որոշակի խնդիրների լուծման վերաբերյալ»: Հղումը՝ https://transparency.am/files/publications/1592292171-0-852077.pdf?v=4%D6%89&fbclid=IwAR1b-V4-gAHejbCpsx0GsboyosMPTKB4czL98qfsb2SwqKl176yzterb7Go. OpenOwnership (2020թ.), «Իրական սեփականության թափանցիկությունը Հայաստանում»: Հղումը՝ https://www.openownership.org/uploads/armenia-scoping-report.pdf ԲԿԳ-ի կայք: Հայաստան՝ իրական սեփականատերերի ռեգիստր (AM0037): Հղումը՝	

	նաև երկրում իրական սեփականատերերի բացահայտման շրջանակն ընդլայնելու Հայաստանի պարտավորության հիման վրա՝ ՀՀ արդարադատության նախարարությունը պատրաստել է օրենսդրական փոփոխությունների փաթեթ, որն այժմ հանրային լսումների/քննարկումների փուլում է։ 2020 թ. 3-րդ եռամսյակային հաշվետվությունում արձանագրված է, որ իրական սեփականատերերի մասին տեղեկություն ներկայացնելու պարտավորություն ունեցող 11 կազմակերպություն նախազգուշացում է ստացել։ Հաշվետվությունում նաև նկարագրվում են հայտարարագրի ձևը և օժանդակ փաստաթղթերը բոլոր 11 կազմակերպությունների համար։ Ավելին, ԲՇԽ-ի քաղաքացիական հասարակության խմբակցությունը մի փաստաթուղթ է մշակել իրական սեփականության մասին	https://www.opengovpartnership.org/members/armenia/commitments/AM0037/	

	տեղեկությունների ներկայացման և ընդհանրապես գործընթացի թերությունների վերաբերյալ: Բացի այդ, ԲԿԳ-ի և «OpenOwnership»-ի շրջանակներում շարունակաբար ուսումնասիրվում է Հայաստանի առաջընթացն իրական սեփականատերերի բացահայտման ուղղությամբ:		
Համապատասխան պետական կառույցը կամ ԲՇԽ-ն մոտեցում է ձևավորել մասնակից ընկերությունների համար՝ իրական սեփականատերերի մասին տեղեկությունների ճշգրտությունն ապահովելու համար (#2.5.ե)	Ըստ ԲՇԽ-ի ինքնագնահատման ձևաթղթի՝ իրական սեփականատերերի հայտարարագիրը ներկայացվում է ընկերության բարձր օղակի ղեկավարության կամ վերջինիս կողմից լիազորված անձի կողմից: Այս անձը ստորագրում է հայտարարագրի առաջին էջը՝ հավաստիանալով, որ ներկայացված տեղեկատվությունը ճիշտ է և լիարժեք: Ըստ գործող օրենսդրության, եթե կազմակերպությունը չի ներկայացրել իրական սեփականատերերի մասին տեղեկատվություն կամ ներկայացված հայտարարագիրը ոչ լիարժեք է կամ կեղծ տեղեկություն է պարունակում, ապա ՏԿԵՆ-ը կիրառում է նախազգուշացում (90 օր), որին հաջորդում է ընդերքօգտագործման թույլտվության	Հայաստանի ինքնագնահատման ձևաթուղթ: Ներկայացվել է Միջազգային քարտուղարությանը: Հայաստանի ԱՃԹՆ-ի կայք, տարեկան և եռամսյակային հաշվետվությունները: Հղումը՝ https://www.eiti.am/en/Quarterly-annual-reports	

	կասեցումը (120 օր) և այնուհետև՝ թույլտվության չեղարկումը: 2020 թ. 3-րդ եռամսյակային հաշվետվությունում արձնագրված են 2020 թ. հոկտեմբերի դրությամբ ներկայացված ձևերում առկա սխալները: Հայտարարագրերում ներկայացված տեղեկությունների ճշգրտությունը ստուգում է ՀՀ արդարադատության նախարարության Իրավաբանական անձանց պետական ռեգիստրը, և անհամապատասխանությունների դեպքում այս տեղեկությունը ներկայացվում է ՏԿԵՆ: Բոլոր շահագրգիռ կողմերը, այդ թվում՝ ֆիզիկական անձինք, կարող են լիազոր մարմիններին տեղեկացնել՝ կեղծ տեղեկության ողջամիտ կասկած ունենալու դեպքում: ԲՇԽ-ի ինքնագնահատման ձևաթղթում արձանագրվել է նաև, որ առցանց հայտարարագրերի ներկայացման հարթակն ունենալու է տվյալների ավտոմատ ստուգաճշտման որոշակի ֆունկցիաներ: Օրինակ՝ ՀՀ քաղաքացիների տվյալներն ավտոմատ ստուգվելու են քաղաքացիների անձնագրային տվյալների բազայի հետ,		

	իսկ Իրավաբանական անձանց պետական ռեգիստրում գրանցված ընկերությունների տվյալներն ավտոմատ գեներացվելու են իրական սեփականատերերի առցանց հայտարարագրերի ձևի համապատասխան դաշտերում և այլն:		
Հրապարակային ցուցակված ընկերությունների, այդ թվում՝ կանոնադրական կապիտալում հարյուր տոկոս մասնակցությամբ դուստր ձեռնարկությունների մասով բացահայտված է ֆոնդային բորսայի անվանումը և ներկայացված է հղում այն ֆոնդային բորսայի գրանցումների մասին, որտեղ նրանք ցուցակված են (#2.5.զ)	Ըստ հայտարարագրի ձևի՝ կա տվյալների դաշտ, որը թույլ է տալիս բացահայտել ֆոնդային բորսայի անվանումը և ներկայացնել հղում դեպի ֆոնդայի բորսայի գրանցումներ: Այս տեղեկատվությունը հրապարակային է:	Հայաստանի ԱՃԹՆ-ի կայք: Իրական սեփականատերերի հայտարարագրի ձև, ոչ պաշտոնական թարգմանություն դեպի անգլերեն: Հղումը՝ https://www.eiti.am/file_manager/EITI%20Documents/Beneficial%20Ownership/BO_declaration_Armenia_eng_non_official.pdf	Շահագրգիռ կողմերի հետ քննարկումների ընթացքում հաստատվել է, որ ֆոնդային բորսայի անվանումն ու ֆոնդային բորսայի գրանցումների հղումը հարցվում է: Այս տեղեկատվության ներկայացման օրինակ է «Չարատ Կապան» ՓԲԸ-ի հայտարարագիրը, որտեղ ներկայացված է հղում դեպի ֆոնդային բորսայի փաստաթղթեր. http://www.londonstockexchange.com/exchange/prices-and-markets/stocks/summary/company-summary/VGG203461055GBGBXAMSM.html
Իրավական սեփականատերերի և համապատասխան	2016-2017 թթ. ԱՃԹՆ-ի զեկույցում նկարագրվում է իրական սեփականության մասին	Հայաստանի ինքնագնահատման ձև: Ներկայացվել է Միջազգային քարտուղարությանը:	Շահագրգիռ կողմերի հետ խորհրդակցությունների ընթացքում հաստատվել է, որ սահմանափակ

ընկերություններում սեփականության մասնաբաժնի մասին տեղեկատվությունը հրապարակային է (#2.5.g)	տեղեկատվության առկայությունը: Առկա տեղեկատվության շրջանակը, կարծես թե, մնացել է անփոփոխ: 2016-2017 թթ. ԱՃԹՆ-ի զեկույցում նշված է, որ սահմանափակ պատասխանատվության ընկերությունների իրավական սեփականատերերի մասին տեղեկատվությունը կարելի է ստանալ ՀՀ արդարադատության նախարարության Իրավաբանական անձանց պետական ռեգիստրից՝ փոքր վճարի դիմաց: Այդ ժամանակ փակ բաժնետիրական ընկերությունների իրավական սեփականատերերի մասին տեղեկատվությունը դեռևս հրապարակային չէր, քանի որ բաժնետերերի ռեգիստրը կառավարվում էր մասնագիտացված գրանցողների կողմից: 2016-2017 թթ. ԱՃԹՆ-ի զեկույցում ներկայացված է հանքարդյունաբերության ոլորտի սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների իրավական սեփականատերերի ցուցակը: Զեկույցում նաև արձանագրված է, որ իրավական սեփականատերերի մասին	Հայաստանի ԱՃԹՆ (2019թ.), «2016-2017 թթ. Հայաստանի ԱՃԹՆ-ի զեկույց»: Հղումը՝ https://www.eiti.am/en/annual-reports/2018 Հայաստանի ԱՃԹՆ (2020թ.), «2018 թ. Հայաստանի ԱՃԹՆ-ի զեկույց»: Հղումը՝ https://www.eiti.am/en/annual-reports/2020 ՀՀ արդարադատության նախարարության Իրավաբանական անձանց պետական ռեգիստր: Հղումը՝ http://www.e-register.am/. Նաև հասանելի է Հայաստանի ԱՃԹՆ-ի կայքում՝ https://www.eiti.am/hy/%D4%BB%D5%8D-%D5%B0%D5%A1%D5%B5%D5%BF%D5%A1%D6%80%D5%A1%D6%80%D5%A1%D5%A3%D5%A5%D6%80/?tab=88	պատասխանատվության ընկերությունների իրավական սեփականատերերի մասին տեղեկատվությունը կարելի է ստանալ ՀՀ արդարադատության նախարարության Իրավաբանական անձանց պետական ռեգիստրից՝ վճարովի հարցման միջոցով: Արձանագրվել է նաև, որ ԲՇԽ-ն քննարկել է փակ բաժնետիրական ընկերությունների իրավական սեփականատերերի բացահայտման հարցը: Այդուամենայնիվ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ այս հարցը չի վերաբերում միայն հանքարդյուաբերության ոլորտին, հաջորդ քայլերի վերաբերյալ միջգերատեչական քննարկումները դեռ ընթացքի մեջ են: ԲՇԽ-ն համարում է, որ այս պահանջը բավարարված է:

	տեղեկատվություն ներկայացնելու մասին հարցում է ուղարկվել համապատասխան բոլոր փակ բաժնետիրական ընկերություններին: Միայն երկու ընկերություն է պատասխանել, սակայն ընկերություններից ոչ մեկը չի ներկայացրել հարցված տեղեկատվությունը: Ըստ 2018 թ. ԱՃԹՆ-ի զեկույցի՝ Հայաստանում ընդերքօգտագործման թույլտվություն ունեցող 26 ընկերություններից 10-ը ՓԲԸ-ներ են:		

Հավելված 2. Հայաստանում իրական սեփականատերերի բացահայտումներին վերաբերող հոդվածներ[13]

Էկոլուր

2020 թվականի իրական սեփականատերերի բացահայտման վերաբերյալ մի շարք հոդվածներ են հրապարակվել ԲՇԽ-ում ներկայացված «Էկոլուր» ՀԿ-ի կայքում.

- https://www.ecolur.org/hy/news/mining/38-20-/12081/
- https://www.ecolur.org/hy/news/mining/12233/
- https://www.ecolur.org/hy/news/mining/12367/
- https://www.ecolur.org/hy/news/mining/12380/
- https://www.ecolur.org/hy/news/mining/12391/
- https://www.ecolur.org/hy/news/mining/12402/
- https://www.ecolur.org/hy/news/mining/12407/
- https://www.ecolur.org/hy/news/mining/12410/
- https://www.ecolur.org/hy/news/officials/12413/
- https://www.ecolur.org/hy/news/officials/12416/
- https://www.ecolur.org/hy/news/officials/12420/
- https://www.ecolur.org/hy/news/officials/12422/
- https://www.ecolur.org/hy/news/officials/12426/
- https://www.ecolur.org/hy/news/mining/12430/
- https://www.ecolur.org/hy/news/mining/12432/
- https://www.ecolur.org/hy/news/mining/12436/

[13] Տեղեկատվությունը տրամադրել է Հայաստանի ԱՃԹՆ-ի ազգային քարտուղարությունը:

- https://www.ecolur.org/hy/news/mining/12445/
- https://www.ecolur.org/hy/news/mining/12480/
- https://www.ecolur.org/hy/news/mining/12570/

Հետք վերլուծական

- «Մետաղական հանքերի սեփականատերերը. հայկական պղնձի և մոլիբդենի առյուծի բաժնից շահույթ են ստանում ռուս գործարարները https://hetq.am/hy/article/117849
- Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատը պարզաբանում է» https://hetq.am/hy/article/118189
- «Նախատեսվում է մինչև մարտի վերջ հանրայնացնել մետաղական հանքերի իրական սեփականատերերի մասին տեղեկատվությունը» https://hetq.am/hy/article/114216
- «Հայաստանի ոսկու հանքերի բացահայտված և չբացահայտված սեփականատերերը» https://hetq.am/hy/article/116955

Սիվիլնեթ

- «Բաժնետերերի նոր փոփոխություններ Զանգեզուրի պղնձամոլիբդենայինում. «Քրոնիմետ»-ը սեփականատերերի ցանկում այլևս չկա» https://bit.ly/38gwOOe

Մեդիամաքս

- «Իրական սեփականատերերի բացահայտման էլեկտրոնային հարթակ. 5 հարց և պատասխան» https://mediamax.am/am/news/digitization/41415/